ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«11» հունիս 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 584-Վ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ ԱԼԻՆԱ ՆՈՐԻԿԻ ՔԱՍԵՈՐԱՆԻ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 960/2024/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ ԱԼԻՆԱ ՆՈՐԻԿԻ ՔԱՍԵՈՐԱՆԻ (Հասցե՝ ք.Երևան Կենտրոն թաղ., Թամանյան փող., 3շ., բն.25, ՀՎՀՀ՝40136753, ՀԾՀ՝ 7610710504) չկատարված հարկային պարտավորությունը 26.01.2024թ-ի դրությամբ կազմում է 1932020 դրամ, այդ թվում հարկ՝ 1743700 դրամ, տույժ 188320 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 10.05.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ 24.02.2021 թվականին ֆիզիկական անձ Ալինա Քասեորանի կողմից <Ջ ԵՎ Ա> ՍՊ ընկերության /ներկայումս<ԱՐ ԸՆԴ ԱՐ/ /ՀՎՀՀ 03552274/ կանոնադրական կապիտալում իրականացվել է ք.Երևան, Արաբկիր, Հ.Էմինի փողոց 1-ին նրբանցք 29/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի ներդրման գործարք, որի պայմանագրային արժեքը կազմել է 53000000 ՀՀ դրամ, իսկ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 27546071 ՀՀ դրամ /շինության կադաստրային արժեքը կազմում է 9084210 ՀՀ դրամ, իսկ հողամասինը՝ 18461861 ՀՀ դրամ/:

ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգի տվյալների համաձայն՝ 18.05.2022 թվականին օտարվել է վերոնշյալ ընկերությունում ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձի ստացված եկամուտները չեն համարվում նվազեցվող, եթե ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի , բնակարանի, առանձնատան կամ այլ շինության / այդ թվում՝ անավարտ /կիսակառույց// ձևով մասնակցության /բաժնետոմսի, բաժնեմասի փայաբաժնի/ կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը /բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը/ ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում:

Օրենսգրքի 150–րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2–րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրուքաչափով:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր էր օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել օրենսգրքի 151-րդ 3-րդ մասով եկամուտների մասով 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող պարտավորությունների գումարը՝համաձայն 158-րդ հեդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է առանձնացված հաշվարկման եղանակով:Հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկման առանձնացված եղանակը նշանակում է, որ՝ եթե հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է հարկման ոչ ենթակա և հարկման ենթակա գործունեության տեսակներ կամ գործարքներ, ապա հարկ վճարողը պարտավոր է վարել հարկման ոչ ենթակա գործունեության տեսակների կամ գործարքներիմասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող /պակասեցվող/ գումարների և հարկման ենթակա գործունեության տեսակների կամ գործարքների մասով ձևավորվող հարկման օբյեկտների, հարկման բազաների, Օրենսգրքով սահմանված նվազեցումների, հաշվանցվող /պակասեցվող/ գումարների առանձնացված հաշվառում:Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-րդ մասի 3-8-

րդ կետերով սահմանված առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չէ, սակայն հարկ վճարողն այն չի ապահովել, ապա հարկային մարմինն իրավունք ունի հարկ վճարողի հարկման օբյեկտները կամ հարկման բազաները կամ հարկի գումարները կամ եկամուտները կամ դրամց ստացման հետ կապված՝ օրենսգրքով սահմանված նվազեցումները կամ հաշվարկվող /պակասեցվող/ գումարները որոշելու նույն հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով սահմանված համապատասխան տեսակարար կշիռների մեթոդի կիրառությամբ:

Ֆիզիկական անձ ԱԼԻՆԱ ՆՈՐԻԿԻ ՔԱՍԵՈՐԱՆԻ կողմից, վերը նշված գործարքի մասով եկամտային հարկը չի հաշվարկվել ինքնուրույնաբար և բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին չի ներկայացվել 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի N3 հավելվածի:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 26.01.2024թ-ի դրությամբ կազմում է 1932020 դրամ, այդ թվում հարկ՝ 1743700 դրամ, տույժ՝ 188320 դրամ, որն առաջացել է 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.ֆիզիկական անձ ԱԼԻՆԱ ՆՈՐԻԿԻ ՔԱՍԵՈՐԱՆԻՑ գանձել 1932020 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

26.01.2024թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	01.05.2023թ	1743700	188320	-	1932020	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Արեգա Պարսեղյան, հեռ. 010-30-91-91 /91-36/: